վում է փակման վտանգի առաջ, որովհետև անկարելի է ծածկել գոյացած 400 բուբլու դեֆիցիտը և նոր եկամտի աղբիւր գտնել։ Աքանասեան իբրև խմբագիր այդ թերթի, որի օգուտը անպայման շատ մեծ է գիւղացու համար, առաջարկում է լուրջ խորհել միջոցներ գտնելու մասին։

Մտքերի հակիրճ փոխանակութիւնից յետոյ, խնդրվում է Ընկերութեան վարչութիւնը՝ դիմումն անել երկրագործութեան դեպարտամենտին յարմար ձևակերպութեամբ նպաստի համար։

Ամենավերջը Ա. Քալանթարի մի քանի ջերմ խօսքերից յետոյ՝ ուղղված գաւառական հիւրերին, վիրջիններս լիակատար պատասխանատուութիւն են յայտնում ամեն կերպ աշակից լինել նորահաստատ Թիֆլիսի Հայ Տնտեսագործական ու Գիւղատնտեսական Ընկերութեանը, որի մինչև այսօր կատարած դուռ ժողովրդական գործունէութիւնը ընդհանուրի համակրանքն է վայելում և որը ապագայում ևս դեռ շատ ու շատ գործեր ունի անելու յօգուտ գիւղացիական բարեւաղուրկ մասսաների։ Ե.

ՀԱՄԱԶԳԱՑԻՆ ՏՈՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԳԱԼԻԱՌՈՒՄ

I

Դպլաբ, 25 հոկտեմբերի

Անցեալ 13-ին՝ շաբաթ, ս. Թարգմանչաց տօնի օրը, Դպլաբի ս. Լուսաւորիչ եկեղեցում եղաւ հոգեհանգիստ մեծ յօբելեանների առիթով։ Եկեղեցում ներկայ էին տեղիս ծխ. և այլ դպրոցների հայ աշակերտուհիները։ Օրվայ առիթով խօսեց հ. Վ. Թաւաբէշեան։

Հետևեալ օրը, կիրակի, նոյն եկեղեցում կայացաւ հայրապետական մաղթանք։ Եկեղեցուց ժողովուրդը դիմեց ծխ. դպրոցների թատրոնական դահլիճը, որտեղ ուսուցչ. կազմը կազմակերպել էր դպրոցական հանդէս 1500-ամեայ և 400-ամեայ յօբելեանների առիթով։

Հանդէսը բաղկացած էր երեք մասից։ Հանդէսը բացվեց «Հայր-մերով» և «Ներանեալ Մովսէսի» շարականով։ Ապա խօսեց դպրոցների աւագ ուսուցիչ Հ. Աբրվեան։ Երգեցին աշակերտուհիները միաձայն մանկական երգեր ղեկավարութեամբ ուսուցիչ Ս. Զուլարեանի։ Արտասանեցին աշակերտուհիները ոտանաւորներ։ Այս առաջին մասն էր։

Երկրորդ մասի սկզբում խօսեց ուսուցիչ Մ. Քրիշչեան։ Այդ մասում երգում էր քառաձայն խումբը ղեկավարութեամբ Մ. Քրիշչեանի բաւականին աջող Ժողովրդական երգեր։ Այդ մասումն էլ աշակերտուհիները արտասանեց ոտանաւորներ։

Երրորդ մասն էր «Գող՝ սիրաը գող» մանկական պիէսը, որ բաւականին լաւ խաղացին դպրոցների աշակերտուհիները ղեկավարութեամբ ուսուցիչ Ս. Կարապետեանը։

Հանդէսը վերջացաւ ժամը 1½-ին։ Ժողովուրդը գոհ մնալով հանդէսից քաղցր տպաւորութեան տակ հեռացաւ թատրոնական դահլիճից։ Դպլաբցի

II

Ատրպատական, 25 հոկտեմբերի

Հայ տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ աղգային մեծ յօբելեանները մենք էլ կատարեցինք։ Սակայն մինչև այդ յօբելեանների կատարումը երկու կուսակցութիւնների միջև տեղի ունեցած վէճը չափազանց վատ տպաւորութիւն էր թողնում թէ մեզ՝ Ռուսաստանում ապրողներիս վրա և թէ հէնց ռուսների վրա, որոնք այս մասին տեղեկութիւնները էին ստանում տեղական ռուս թերթերի հայկական բաժիններից։

Յօբելեանի օրերը մտնում էին, բայց էշմիածնից դեռ ոչ մի տեղեկութիւն չը կար կատարել չը կատարելու կամ թէ ինչ ձևով կատարելու մասին։ Վերջապէս կաթողիկոսական դիւանից ստացված հեռագիրը վերջնականապէս յայտնեց հոկտեմբերի 13—14-ի տօնակատարութեան մասին։ Հեռագրի բովանդակութիւնը իսկոյն յայտնվեց թեմին, իսկ տեղումս կատարելու մասին ծանուցվեց եկեղեցիներում։ Ատրպատականցիք, պէտք է ասած, շատ քիչ էին հետաքրքրվում այդ մեծ յօբելեաններով։ հայ գրոցներից և աշակերտութիւնից զուրկ Ատրպատականի հայ գաղութին մարդ չը գիտէր թէ ինչ ձևով հետաքրքրեցնէր։

Շաբաթ, ամսիս 13-ին, կատարվեց ս. Պետրոս-Պողոս եկեղեցում պատարագ և հոգեհանգիստ՝ ամբողջ հոգևորականութեան ներկայութեամբ։ Եկեղեցում ժողովուրդ չը կար։ միայն ներկայ էին թեմ. դպրոցի և Աղաբաբեան դպրոցի երկու զոյգ ու մի կէնտ աշակերտուհիները...

Իսկ կիրակի օրը, հանդիսաւոր պատարագից յետոյ, բաւական ստուար բազմութեան ներկայութեամբ կատարվեց հայրապետական մաղթանք։ Մաղթանքից առաջ հայ գրերի և գրականութեան նշանակութեան մասին խօսեց Սարգիս քահ. Ասլանեանը։

Այդ օրը մի քանի հայ հիմնարկութիւնների կողմից ոնորհաւորական հեռագիրներ ուղարկվեցին էջմիածին։

Ս. ք. Ասլանեանց

ԾԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Բոմանովների Տան Թագաւորութեան 300-ամեայ յօբելեանի առիթով վրաց ազնուականութիւնը առաջարկել է Իպպոլիտով-Իվանովին կազմել վրաց երաժշտութեան պատմութիւնը։

◆ Թիֆլիսի քաղաքային ֆինանսական մասնաժողովը մինչև այժմ կրճատել է Թիֆլիսի նախահաշուից 14,850 ր. եկամտի յօդուածների մէջ, իսկ 86,865 ր. ծախքերի յօդուածների մէջ։

◆ Առաջարկված է քաղաքային քիմիկոսին քննել Թիֆլիսում վաճառվող քաղցր ջրերը (լիմոնադ)։

◆ Բաղում Բէնկենդորֆը 3000 բուբլի նուիրեց ժողովրդական համալսարանի ընկերութեան օգտին։

◆ Վրաց. Իմպերիային սինոդական գրասենեակը առաջարկեց հոգեհանգիստ կատարել հանգուցեալ Անտոն Միտրոպոլիտի համար էկզարխութեան բոլոր եկեղեցիներում։

◆ Յայտնի դասախօս Գօրդոնը մեկնեց Բաղու՝ այնտեղ ևս մի դասախօսութիւն կարդալու համար։

◆ Կիրակի, նոյեմբերի 12-ին, ժողովրդական Տունը գրականութեան ուսուցիչ Մ. Մաուէնեանը հայերէն լեզուով կը դասախօսէ հետևեալ նիւթի մասին. «Թիւրքական գրականութիւնը, Գրիգոր Զօրապ» Մուտքի վճարը 5 և 10 կոպ.։

◆ Մասցանք Բաղումի հրատարակվող «Նոնանդ» անունով մի նոր գրական, հասարակական, տնտեսական և քաղաքական երկշաբաթաթերթի առաջին համարը։ Նոր թերթը, ինչպէս երևում է, նուիրված է լինելու աշխատաւոր մասսաների շահերի պաշտպանութեան։ Աջողութիւն ենք մաղթում։

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Բուդոլֆը կը վերադառնայ Թիֆլիս դեկտեմբերի սկզբին։

◆ Զատկից առաջ Թիֆլիսում կը բացվի թաղնապատների ցուցահանդէս։

◆ Մենք հաղորդեցինք, որ Թիֆլիսում սկսել է հրատարակվել «Կովկասի Լրաբեր» անունով 2 կողմանոց մի օրաթերթ։ Նոր օրաթերթը, ինչպէս երևում է, կամենում է խրատ տուողի և քարոզիչի դեր ևս կատարել. այդ բաւական չէ. նա իւրացրել է հանգուցեալ «Մուրհանդակի» տգեղ սովորութիւնը, արտատպել ուրիշ թերթերից տեղեկութիւններ և աղբիւրը բնաւ չը դնել։ Թերթը արտատպել է «Մշակից» Իպմիրեան գրական մրցանակաբաշխութեան մասին յօդուածը ամբողջովին, առանց յիշելու աղբիւրը։

◆ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը սովորական երեկոյթի փոխարէն, ամսիս 27-ին, Աբգարեանի թատրոնում տալու է հայերէն ներկայացում, դերասանների մասնակցութեամբ, որ բաւականին հետաքրքրական է լինելու։ Ներկայացումից յետոյ տեղի է ունենալու հետաքրքրական բովանդակութեամբ համերգ, որին մասնակցելու են հասարգային դերասանները։

◆ Կովկասեան գրենադերական գնդի օֆիցէրները փոխանակ ամեն տարի կազմակերպվող տօնի (Նոյեմբերի 8 ին) այս անգամ 500 ր. նուիրաբերեցին վիրաւոր պաւօններին։

◆ Բաղուի միլիոնատէր Հ. Զ. Ա. Թաղիէվի գործը կը քննվի Թիֆլիսում յունվարի 10-ին։

◆ Միլիոնատէր Թաղիէվը 1000 ր. նուիրեց ս. Նինայի օրիորդաց դպրոցին, իսկ մեռ միլիոնատէր Մուսա Նաղիէվը նուիրեց 5000 բուբլի։

◆ Բաղուից «Т. Л.»-ին հեռագրում են, որ առանց բացատրութիւնների փակվեց նաւթարդիւնաբերող բանտորների պրոֆէսիոնալ միութիւնը, որ ունէր 9000 անդամ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 7 նոյեմբերի

Մի քանի օր առաջ ինձ համար մի անհաճոյ լուր հաղորդեցին իմ մասին։ Իբրև, այս տարվայ թատրօնական սեզոնի սկզբին, գրաւոր դիմում եմ արել Հ. Դ. Ը. վարչութեանը խնդրելով ընդունել ինձ խմբում և որ Հ. Դ. Ը. վարչութիւնը մերժել է... Դա ասէ-կասէ է. պէտք է ասեմ, որ իմ կողմից ոչ գրաւոր, ոչ բերանացի և ոչ էլ խնամական կամ այլ միջոցներով, ոչ մի դիմում չէ եղած։

Դերասան Ե. Ստեփանեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ Հեռ. ԳՈՐԾ.)

6 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաւվեցին «Լուչ»-ի № 43 և «Совр. Слово»-ի № 1737.

ՊԵՏՊՈԿՈՎ։ Վարչական դատաստանական պալատի ատեանում սկսվեց Մացոխի յայտնի գործի քննութիւնը։

ԿՈՉԼՈՎ։ Անցայտ պատճառից այրվում է «Ուսիեոնդ» սառցարանը։ Կրակին գոհ գնացին բազմաթիւ թռչուն ու ձու. մի միլիոն բուբլու արժողութեան։ Կան մարդկային զոհեր։